ՀՈՎՍԵՓԻ ԿՅԱՆՔԸ. ՀՈՎՍԵՓԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՄՆՎԱԾ ՃՇՄԱՐԻՏ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԾՆՆԴՈՑ 42.1-24

1 Հակոբը տեսավ, որ Եգիպտոսում ցորեն կա, և ասաց իր որդիներին. Ինչո՞ւ եք իրար նայում: Եվ
ասաց. 2 Լսել եմ, որ Եգիպտոսում ցորեն կա. իջե՛ք այնտեղ և մեզ համար գնե՛ք այնտեղից, որպեսզի
ողջ մնանք և չմեռնենք: 3 Հովսեփի տասը եղբայրներն իջան Եգիպտոս՝ ցորեն գնելու: 4 Բայց Հակոբը
Հովսեփի եղբայր Բենիամինին չուղարկեց նրանց հետ, որովհետև ասում էր. Միգուցե փորձանք
պատահի նրան:

5 Իսրայելի որդիները եկան ցորեն գնելու այնտեղ գնացողների հետ, որովհետև Քանանի երկրում սով
կար: 6 Հովսեփը այդ երկրի իշխանն էր. ինքն էր ցորեն վաճառում երկրի ամբողջ ժողովրդին:
Հովսեփի եղբայրները եկան և խոնարհություն արեցին նրան՝ իրենց երեսներն իջեցնելով մինչև
գետին: 7 Հենց որ Հովսեփը տեսավ իր եղբայրներին, ճանաչեց նրանց, բայց իրեն չճանաչեցրեց
նրանց ու նրանց հետ խստությամբ խոսեց և ասաց նրանց. Որտեղի՞ց եք եկել: Նրանք
պատասխանեցին. Քանանի երկրից՝ ուտելիք գնելու: 8 Հովսեփը ճանաչեց իր եղբայրներին, բայց
նրանք չճանաչեցին իրեն: 9 Հովսեփը հիշեց նրանց վրա տեսած իր երազները և ասաց նրանց. Դուք
լրտեսներ եք, եկել եք երկրի թույլ կողմերը հետախուզելու: 10 Եվ ասացին նրան. Ո՛չ, տե՛ր իմ, քո
*ծառաները եկել են ուտելիք գնելու: 11 Մենք ամենքս մեկ մարդու որդիներ ենք, **մենք ազնիվ ենք**, քո*
ծառաները լրտեսներ չեն: 12 Եվ Հովսեփն ասաց նրանց. Ո՛չ, դուք եկել եք երկրի թույլ կողմերը
*հետախուզելու: 13 Նրանք ասացին. Մենք՝ քո ծառաները, **տասներկու եղբայրներ ենք**, Քանանի*
*երկրում մեկ մարդու որդիներ. ահա մեր կրտսերն այսօր մեր հոր մոտ է, **իսկ մեկը չկա**: 14 Հովսեփն*
ասաց նրանց. Հենց այս խոսեցի ձեզ հետ՝ ասելով, թե դուք լրտեսներ եք: 15 Սրանով պետք է
փորձվեք. Փարավոնի կյանքը վկա, որ դուք դուրս չեք ելնի այստեղից, եթե ձեր կրտսեր եղբայրն
այստեղ չգա: 16 Ձեզնից մեկին ուղարկե՛ք, որ բերի ձեր եղբորը, իսկ դուք կբանտարկվեք, որ փորձվեն
ձեր խոսքերը, թե արդյոք ձեր ասածների մեջ ճշմարտություն կա՞. եթե ոչ, փարավոնի կյանքը վկա, որ
դուք լրտեսներ եք: 17 Եվ երեք օր բանտարկեց նրանց: 18 Երրորդ օրը Հովսեփն ասաց նրանց. Արե՛ք
այս, որ ողջ մնաք. ես ԱՍՏԾՈՒՑ վախեցող մարդ եմ. 19 եթե դուք ազնիվ եք, թող ձեր եղբայրներից
մեկն արգելափակված մնա ձեր բանտարկված տան մեջ, իսկ դուք գնացե՛ք, ցորե՛ն տարեք ձեր
սովահար ընտանիքների համար: 20 Եվ ձեր կրտսեր եղբորն ինձ մո՛տ բերեք, որպեսզի ձեր խոսքերի
ճշմարտությունը հաստատվի, և չմեռնեք: Այդպես էլ արեցին: 21 Նրանք ասում էին միմյանց. Իրոք,
մենք հանցավոր ենք մեր եղբոր հանդեպ, որովհետև տեսանք նրա հոգու տագնապը, երբ նա
աղաչում էր մեզ, բայց չլսեցինք: Դրա համար էլ մեր գլխին է գալիս այս նեղությունը: 22 Ռուբենը
պատասխանեց նրանց և ասաց. Ես չէ՞ի ասում, թե՝ "Այդ տղայի դեմ մեղք մի՛ գործեք", իսկ դուք
չլսեցիք: Եվ ահա հիմա նրա արյունն է պահանջվում: 23 Բայց նրանք չգիտեին, որ Հովսեփը
հասկանում էր, որովհետև նա թարգմանչի միջոցով էր խոսում իրենց հետ: 24 Եվ Հովսեփը,
առանձնանալով նրանցից, լաց եղավ: Ու վերադարձավ նրանց մոտ և խոսեց նրանց հետ: Ապա
նրանց միջից վերցնելով Շմավոնին՝ նրանց աչքի առաջ կապեց նրան:

Այսօր ես ուզում եմ, որ դուք նկատեք, որ Հովսեփի համար այս ներողամտությունը իր եղբայրների հետ գործընթաց էր: Հովսեփը փորձեց իր եղբայրներին: Նա նայում էր և սպասում, որ տեսնի՝ արդյոք նրանց մեջ մտքի փոփոխություն կա: Երբ մենք սկսում ենք դիտարկել ներման և հաշտեցման այս գործընթացը, ուշադրություն դարձրեք երեք բանի. Առաջին, Հովսեփը ցանկանում էր ներել, բայց զգուշանոգմ էր: Երկրորդ, Հովսեփն իմաստուն էր՝ փորձելու և դիտելու, սպասելու և տեսնելու հարցում: Եվ երորդ, Հովսեփը զերծ պահեց իր սիրտը դառնությունից և աններողամտությունից:

I. ՀՈՎՍԵՓԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԷՐ ՆԵՐԵԼ, ԲԱՅՑ ԶԳՈՒՇԱՆՈՒՄ ԷՐ:
JOSEPH WAS EAGER TO FORGIVE, BUT GUARDED.

Հովսեփը ճանաչեց իր եղբայրներին... Հովսեփը հիշեց նրանց վրա տեսած իր երազները...

Հովսեփը մեղանչե՞ց, երբ իր եղբայրների հետ այդպես վարվեց: Արդյո՞ք նա չկարողացավ սրտանց ներել:

18 Ես ԱՍՏԾՈՒՑ վախեցող մարդ եմ. 24 Եվ Հովսեփը, առանձնանալով նրանցից, լաց եղավ:

Չորս բաներից, որ եղբայրներն իրենց մասին ասացին, երեքը ճշմարիտ էին:

*10 Եվ ասացին նրան. Ո՛չ, տե՛ր իմ, քո ծառաները եկել են ուտելիք գնելու: 11 Մենք ամենքս մեկ մարդու որդիներ ենք, **մենք ազնիվ ենք**, քո ծառաները լրտեսներ չեն: 12 Եվ Հովսեփն ասաց նրանց. Ո՛չ, դուք եկել եք երկրի թույլ կողմերը հետախուզելու: 13 Նրանք ասացին. Մենք՝ քո ծառաները, **տասներկու եղբայրներ ենք**, Քանանի երկրում մեկ մարդու որդիներ. ահա մեր կրտսերն այսօր մեր հոր մոտ է, **իսկ մեկը չկա**: 14 Հովսեփն ասաց նրանց. Հենց այս խոսեցի ձեզ հետ՝ ասելով, թե դուք լրտեսներ եք: 15 Սրանով պետք է փորձվեք.*

Ուշադրություն դարձրեք, որ Հովսեփն իր հայացքն ուղղեց այն պնդումներին, որ նրանք ազնիվ մարդիկ էին:

11 մենք ազնիվ ենք, տասներկու եղբայրներ ենք, իսկ մեկը չկա...

II. ՀՈՎՍԵՓՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԷՐ՝ ՓՈՐՁԵԼՈՒ ԵՎ ԴԻՏԵԼՈՒ, ՍՊԱՍԵԼՈՒ ԵՎ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ:
JOSEPH WAS WISE TO TEST AND TO WATCH, WAIT AND SEE

- ***Եբրայերենում «ազնիվ, כֵּן» թարգմանված բառը նշանակում է լինել ճշմարիտ կամ արդար: Հովսեփի եղբայրներն ոչ միայն պնդում են, որ ճշմարտությունն խոսող մարդիկ են, այլև արդար մարդիկ են: (Քամաթ)***
- ***Ազնիվ բառը հայտնվում է 5 անգամ Ծննդոց 42-ում: Մեկ անգամ, երբ եղբայրները պնդում էին, որ ազնիվ են, և չորս անգամ՝ Հովսեփի հետ, երբ նա փորձում էր՝ նրանց պարզելու, թե արդյոք դա իսկապես ճշմարիտ է:***

Ազնվությունը մի բան է որը պետք է գործնականում տեսնել:

17 Եվ երեք օր բանտարկեց նրանց: 18 Երրորդ օրը Հովսեփն ասաց նրանց. Արե՛ք այս, որ ողջ մնաք...19 եթե դուք ազնիվ եք, թող ձեր եղբայրներից մեկն արգելափակված մնա ձեր բանտարկված տան մեջ, իսկ դուք գնացե՛ք, ցորե՛ն տարեք ձեր սովահար ընտանիքների համար: 20 Եվ ձեր կրտսեր եղբորն ինձ մո՛տ բերեք, որպեսզի ձեր խոսքերի ճշմարտությունը հաստատվի, և չմեռնեք: Այդպես էլ արեցին:

- ***Հովսեփը փորձում է իր եղբայրների ազնվությունը:***

  25 Հովսեփը հրամայեց, որ նրանց պարկերը լցնեն ցորենով, ամեն մեկի փողը դնեն իր
  քսակի մեջ և նրանց պաշար տան ճանապարհի համար: Այդպես էլ արվեց նրանց:
  26 Նրանք, իրենց ցորենը բարձելով իրենց էշերի վրա, մեկնեցին այնտեղից:

- ***Քանանից Եգիպտոս ճանապարհորդությունը տևում էր 250-ից 330 մղոն, և կարող էր տևել վեց շաբաթ: Պարզապես պատկերացրեք նրանց զրույցը տուն վերադառնալու ճանապարհին:***

  27 Նրանցից մեկը իջևանում բաց արեց իր պարկը՝ կեր տալու համար իր էշին, և
  տեսավ, որ իր փողը դրված է իր պարկի բերանին: 28 ***Եվ ասաց իր եղբայրներին. Իմ***
  փողը վերադարձվել է, *ահա այստեղ՝ իմ պարկի մեջ է: Նրանց սիրտը խռովվեց, և*
  վախենալով ասացին միմյանց. Աստված այս ի՞նչ արեց մեզ:

- ***Հովսեփի եղբայրները պատմում են իրենց հորը, և ասում.***

  31 Նրան ասացինք. "Մենք ազնիվ ենք, լրտեսներ չենք: 32 Մենք տասներկու
  եղբայրներ ենք՝ մեր հոր որդիները. մեզնից մեկը չկա, իսկ կրտսերն այսօր մեր հոր
  մոտ է՝ Քանանի երկրում: 33 Այդ երկրի տերը եղող մարդը մեզ ասաց. Սրանով
  կիմանամ, թե դուք ազնիվ եք. ձեր եղբայրներից մեկին թողեք ինձ մոտ, ձեր
  ընտանիքի համար ցորեն վերցրեք և գնացեք: 34 Եվ ձեր կրտսեր եղբորն ինձ մո՛տ
  բերեք, որպեսզի գիտենամ, թե դուք լրտեսներ չեք, այլ ազնիվ եք. ձեր եղբորն էլ
  կվերադարձնեմ ձեզ, և այս երկրում առևտուր կանեք:

35 Երբ նրանք դատարկեցին իրենց պարկերը, ամեն մեկի փողի քսակն իր պարկում էր: Իրենք
և իրենց հայրը տեսան փողի քսակները և վախեցան:

III. ՀՈՎՍԵՓԸ ԶԵՐԾ ՊԱՀԵՑ ԻՐ ՍԻՐՏԸ ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՆՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅՈՒՆԻՑ:

JOSEPH KEPT HIS HEART FREE FROM BITTERNESS AND UN-FORGIVENESS

- ***Եղբայրներ և քույրեր, թող մեր սերը Աստծո և միմյանց հանդեպ միշտ անկեղծ լինի:***

  Եփեսացիներին 4.31-32 – Ամեն դառնություն, բարկություն, զայրույթը, աղաղակ և
  հայհոյություն թող վերանա ձեզանից ամբողջ չարությամբ հանդերձ: Միմյանց հետ քաղցր
  եղեք, գթած՝ միմյանց ներելով, ինչպես որ Աստված էլ Քրիստոսի միջոցով ձեզ ներեց:

  Սուրբ գրության ուսուցումն այնքան պարզ է այս կետում, որ ես կասկածում եմ, որ ձեզնից
  որևէ մեկը չհամաձայնվի այն, ինչ հենց նոր ասվեց: Դուք կարող եք պատասխանել ասելով,
  բայց դա դժվար է անել: Եվ ես կհամաձայնեի ձեզ հետ այդ հարցում: Երբեմն ուրիշներին
  ներելը դժվար է: Մեր հպարտությունը կարող է խանգարել: Մեր սիրտը կարող է քարի պես
  կարծրանալ և դառնանալ ուրիշների հանդեպ, եթե մենք զգույշ չլինենք այն պահել: Բայց ոչ
  ոք չի կարող վիճել այն գաղափարի դեմ, որ քրիստոնյաները կոչված են ներելու ուրիշներին
  սրտանց:

ՀԱՐՑ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ.

Քրիստոնյաները պետք է սրտանց ներեն, բայց ինչպե՞ս: Ե՞րբ պետք է ներել, և ինչպիսի՞ն է այս ներումը:

1. ***Ներումը կարող է իրականացվել միայն այնտեղ, որտեղ կա Ճշմարիտ ապաշխարություն:***

   «Որովհետեւ Աստուծոյ ուզած կերպով տրտմութիւնը բերում է ապաշխարություն, որը տանում է դեպի փրկություն և չի թողնում ափսոսանք... բայց աշխարհի վիշտը մահ է ծնումե (Բ Կորնթացիս 7.10): Աստվածային տրտմութիւնը (Godly sorrow) փոփոխություն և հույս է ներշնչում Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

2. ***Ներելու համար դուք պետք է անմիջապես դիմեք Աստծուն, և ոչ թե ձեր վիրավորողին:***

3. ***Եթե բարկանաք, մի՛ մեղանչեք (Սաղ. 4.4). թող արեգակը ձեր բարկության վրա մայր չմտնի: Եվ սատանային առիթ մի՛ տվեք: Եփեսացիներին 4:26-27***

ՆԵՐՄԱՆ ԱՂՈԹՔ

1. *Հիսուս Քրիստոսի անունով ես <u>որոշում</u> եմ ներել _____-ին_____-ի համար:*

2. *Ես չեմ զգում, որ ուզում եմ ներել _____-ին, բայց ես որոշում եմ դա անել Հիսուս Քրիստոսին <u>հնազանդվելով</u>:*

3. *Ես որոշել եմ ներել իմ կամքով, քանի որ Տերն է ուզում, որ ներեմ, և ես <u>ուզում եմ</u> ամեն կերպով նման լինել Քրիստոսին:*

4. *Ես հասկանում եմ, որ ներում եմ Քրիստոսի համար, ոչ թե որ _____-ը արժանի է կամ ուզում է: Ավելին, ներել, չի նշանակում, որ տվյալ անձը չի վիրավորել ինձ, դա նշանակում է, որ նա վիրավորել է ինձ, բայց Քրիստոսի միջոցով ես <u>որոշում եմ</u> ներել նրան:*

Forgiveness Prayer

1. In the name of Jesus Christ, I *<u>choose</u>* to forgive _____ for _____.

2. I don't feel like forgiving _____, but I choose to do so out of *<u>obedience</u>* to Jesus Christ.

3. I choose to forgive by my will because the Lord wants me to and I *<u>want</u>* to be more like Christ in every way!

4. I understand that I forgive for Christ, not because _____ deserves it or wants it. In addition, forgiving does not meant the person didn't hurt me, it means they did, but through Christ I *<u>choose</u>* to forgive them.

- *Սիրելի որդին, ում Դուք կարծում էիք, որ մահացած է, իսկապես կենդանի է:*
- *Կենդանի որդին բարձրացավ ամենաբարձր տեղը:*
- *Կենդանի որդին տալիս է կյանքի հացը (կենաց հացը):*
- *Կենդանի որդին աշխարհի Փրկիչն է:*
- *Կենդանի որդին՝ նշանակում է, որ Դուք կարող եք կրկին վստահել Աստծուն:*
- *Կենդանի որդին հույս է տալիս անհույսին:*

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ